ի Դշի օրս (11 Յ–Ն.) գային յամենայն կողմանց ձիով եւ ջորով եւ բաղում գանձիւ, գաչխարհս եւ զերկիրս կողոպտեալ և զգեղօրայքս հրդեհեալ փլուցին, որ և արք գեղոցն և բնակչացն հալածէին՝ ի տեղւոջէ ի տեղ փախելով և բազումք ի քաղաքս եկեալ բնակեցան:

Եւ Երի օրս (12 Յ–Ն.) կրկին գային նոյնպէս գանձիւ եւ բազում թօփ կայր ընդ նոսա, որ ընդ իւրեւ բարձեալ ունէր, և գնացին այս զօրքն և բնակեցան ի ԵԷնկիպազէան, և ինքն գնաց ի գարպաս Սալէհ փաշային, որ ի կողմանս Մահմուտ փաշային: Օրս անձրեւ եկաւ չատ: Եւ օրս տօվա արարին Տաճկունքն վասն տօնանմային:

Եւ օրս Ճիհէլլէմ Նէրահիէնին ի վերայ եղիազար վարդապետին ի Ղալաթա պօստանճի ոմն բերեալ թէ Հրամանաւ պօստանճուպաշուն գայս մարդս պիտիր որ յիւր տեղն գնես եւ ի վերայ ճէմաաթին տիրութիւն առնէ որպէս առաջն: Եւ Վարդապետն ասացեալ թէ Այս քաղաքս մեծաւոր սեպհականէ չունի և ես ևս ոչ եմ, այլ պանդուխտ եկեալ եմ ասա սակս իրաց լինէ, և բան մեր լինի՝ երթամք զճանապարհս մեր. այլ այդմ իրաց կու իշխեն քաղաքիս ճէմաաթն: Եւ ի հարցանել[1]) ընդ իշխանս որ անդ կային թէ Դուք ի՞նչ կ'ասէք, և նոքա ասացեալ թէ Զար մարդ է ի մէջ մեր, և այսպէս արարեալ եմք զնա: Եւ նա ի դուրս ելեալ եւ ասացեալ իշխանացն թէ Դուք զիուրքն հայ կու պահէք եւ զայս էրէցս այսպէս արարեալ էք. քանզի եւ նորա հասկացուցեալ են զբանն: Եւ վարդապետքն թուղթ գրեալ յեկեղեցիսն թէ եկէ՛ք:

Եւ առաւօտուս Ուրբաթ (13 Յ–Ն.) պիտիր գնա-

1) հարցել.